ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԻՆԱՐԱՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

5/2011 թ. (165)

СОЮЗ СТРОИТЕЛЕЙ АРМЕНИИ

ИЗВЕСТИЯ

BULLETIN

BUILDER UNION OF ARMENIA

ԵՐԵՎԱՆ 2011

Հայաստանի շինարարների միության տեղեկագիր

Известия Союза Строителей Армении

Bulletin Builders of Armenia

Խմբագրական կազմ

Նախագահ՝ Գագիկ Գալստյան
Պատասխանատու քարտուղար՝ Գուրգեն Մինասյան
Գիտական ղեկավար՝ Յուրի Սաֆարյան
Անդամներ՝ Արեստ Բեգլարյան
Վլադիմիր Համբարձումյան
Սարգիս Թովմասյան
Մկրտիչ Մինասյան
Պատասխանատու խմբագիր՝ Հայկանուշ Սամվելյան
Համարի պատասխանատու՝ Ալբերտ Թորոսյան

Редакционный совет

Председатель- Гагик Галстян
Ответственный секретарь- Гурген Минасян
Главный редактор ь-Юрий Сафарян
Члены - Арест Бегларян
Владимир Амбарцумян
Сурен Мхитарян
Саргис Товмасян
Мкртич Минасян
Ответственный редактор- Айкануш Самвелян
Ответственнный за номер- Альберт Торосян

Editorial council

President - Gagik Galstyan
Executive secretary - Gurgen Minasyan
Editor-in-chief Yuri Safaryan
Members - Arest Beglaryan
Vladimir Hambardzumyan
Suren Mkhitaryan
Sargis Tovmasyan
Mkrtich Minasyan
Executive editore - Haykanush Samvelyan
Executive of edition - Albert Torosyan

Տեղեկագիրը երաշխավորված է տպագրության Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի գիտական խորհրդի կողմից

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

3 մարտի 2011 թվականի N 257-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՅԱՊԱՏՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ, 17-րդ, 23-րդ, 24-րդ, 25-րդ ու 26-րդ հոդվածներին և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 9-ի N 1768-Ն որոշման 4.1-ին ու 4.3-րդ կետերին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետությունում շինարարության օբյեկտները, ելնելով դրանց ծավալից, նշանակությունից, կարևորությունից ու բարդությունից, ինչպես նաև մարդկանց և շրջակա միջավայրի անվտանգությունից, ըստ ռիսկայնության աստիճանի դասակարգվում են հետևյալ հինգ կատեգորիաների՝

1) ցածր ռիսկայնության օբյեկտներ (I կատեգորիա).

2) միջին ռիսկայնության օբյեկտներ (II կատեգորիա).

3) միջինից բարձր ռիսկայնության օբյեկտներ (III կատեգորիա).

4) բարձր ռիսկայնության օբյեկտներ (IV կատեգորիա).

5) բարձրագույն ռիսկայնության օբյեկտներ (V կատեգորիա):

2. Սույն որոշման 1-ին կետի՝

1) 1-ին ենթակետով սահմանված I կատեգորիայի՝ ցածր ռիսկայնության օբյեկտներ են համարվում Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի Հայաստանի Հանրապետությունում շինարարության թույլտվության և քանդման թույլտվության կարգը հաստատելու մասին N 91 որոշման N 2 հավելվածով սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող օբյեկտները.

2) 2-րդ ենթակետով սահմանված II կատեգորիայի՝ միջին ռիսկայնության օբյեկտներ են համարվում Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մայիսի 6-ի «Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության իրականացման կարգը հաստատելու մասին» N 711-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ և 25-րդ կետերով սահմանված օբյեկտները.

3) 3-րդ ենթակետով սահմանված III կատեգորիայի՝ միջինից բարձր ռիսկայնության օբյեկտներ են համարվում Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մայիսի 6-ի «Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության իրականացման կարգը հաստատելու մասին» N

711-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետի 3-րդ ենթակետով և 24-րդ կետով սահմանված օբյեկտները.

4) 4-րդ ենթակետով սահմանված IV կատեգորիայի՝ բարձր ռիսկայնության օբյեկտներ են համարվում Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մայիսի 6-ի «Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության իրականացման կարգը հաստատելու մասին» N 711-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետի 2-րդ ենթակետով և 12-րդ կետով սահմանված օբյեկտները.

5) 5-րդ ենթակետով սահմանված V կատեգորիայի՝ բարձրագույն ռիսկայնության օբյեկտներ են համարվում Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մայիսի 6-ի «Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության իրականացման կարգը հաստատելու մասին» N 711-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետի 1-ին ենթակետով և 10-րդ կետով սահմանված օբյեկտները:

3. Ըստ ռիսկայնության աստիճանի՝ շինարարության օբյեկտների կառուցապատման ընթացակարգերի առանձնահատկությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 29-ի «Ճարտարապետահատակագծային առաջադրանք տալու կարգը հաստատելու մասին» N 1473-Ն, Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 21-ի «Բնակելի, հասարակական, արտադրական շենքերի ու շինությունների նախագծերի մշակման, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը սահմանելու մասին» N 812, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մայիսի 6-ի «Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության իրականացման կարգը հաստատելու մասին» N 711-Ն, Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 28-ի «Կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին իրազեկման և հրապարակված քաղաքաշինական ծրագրերի ու նախագծերի քննարկմանը և որոշումների ընդունմանը հասարակայնության ներկայացուցիչների մասնակցության կարգը հաստատելու մասին» N 660, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի «Հայաստանի Հանրապետությունում շինարարության թույլտվության և քանդման թույլտվության կարգը հաստատելու մասին» N 91 և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի «Ավարտված շինարարության շահագործման փաստագրման կարգը հաստատելու մասին» N 626-Ն որոշումներով:

4. Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 29-ի «Ճարտարապետահատակագծային առաջադրանք տալու կարգը հաստատելու մասին» N 1473-Ն որոշմամբ հաստատված կարգում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) կարգի 3-րդ կետում «համայնքի վարչական սահմաններից դուրս գտնվող տարածքներում՝ մարզպետը, եթե օրենքով» բառերը փոխարինել «եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ» բառերով.

2) կարգի 4-րդ կետում՝

ա. «տեխնիկական պայմանները» բառերը փոխարինել «քաղաքաշինական օբյեկտի ինժեներական ենթակառուցվածքների (ջրամատակարարում, ջրահեռացում, էլեկտրամատակարարում և այլն) նախագծման տեխնիկական պայմանները (այսուհետ՝ տեխնիկական պայմաններ)» բառերով,

բ. կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ երկրորդ պարբերությամբ.

«Նոր կառուցվող բազմաբնակարան բնակելի շենքերի առաջադրանքը պարտադիր պահանջ է ներառում նաև փոստային բաժանորդային պահարանների տեղադրման վերաբերյալ՝ «Փոստային կապի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:».

3) կարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 4.1-ին, 4.2-րդ, 4.3-րդ և 4.4-րդ կետերով.

4.1. Առաջադրանքի անբաժանելի մասը կազմող տեխնիկական պայմանները տրվում են ինժեներական սպասարկում իրականացնող ծառայությունների կողմից (այսուհետ՝ ծառայություններ)՝ առաջադրանք տրամադրող իրավասու մարմնին՝ վերջինիս հարցման հիման վրա:

4.2. Սույն կարգի 16-րդ կետով սահմանված դեպքերում կառուցապատողի (հայտատուի) հայտի ընդունման օրվանից եռօրյա ժամկետում իրավասու մարմինը հարցում է ներկայացնում համապատասխան ծառայություններ՝ տեխնիկական պայմաններն ստանալու համար, կցելով սույն կարգի 18-րդ կետով սահմանված փաստաթղթերը:

4.3. Սույն կարգի 12-րդ կետով նախատեսված դեպքերում առաջադրանքի ձևավորման փուլում՝ համապատասխան ծառայությունների կողմից տեխնիկական պայմանները տրամադրվում են իրավասու մարմնի հարցումն ստանալու օրվանից՝ սույն կարգի 4.4-րդ կետով սահմանված կարգով և ժամկետներում:

4.4. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ II ռիսկայնության աստիճանի (կատեգորիայի) դասակարգում ունեցող օբյեկտների համար համապատասխան ծառայությունների կողմից տեխնիկական պայմաններն իրավասու մարմնին են տրամադրվում վերջինիս հարցումն ստանալու օրվանից հնգօրյա ժամկետում, III կատեգորիայի օբյեկտների համար՝ 10-օրյա, իսկ IV և V կատեգորիաների օբյեկտների համար՝ 15-օրյա ժամկետում:ե.

4) կարգի 11-րդ կետում «կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 21-ի N 812 որոշման NN 2 և 3 հավելվածներում ներառված հատուկ օբյեկտների և կարևորագույն նշանակություն ունեցող» բառերը փոխարինել «օրենսդրությամբ IV և V կատեգորիաների դասակարգում ունեցող» բառերով.

5) կարգի 12-րդ կետի «գ» ենթակետում «օրենքով և սույն կարգի 3-րդ և 3.1-ին կետերով սահմանված համապատասխան մարմնի (այսուհետ՝ իրավասու մարմին)» բառերը փոխարինել «՝ հողամասը կառուցապատման նպատակով տրամադրելու մասին որոշման հետ միասին՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:» բառերով.

6) կարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 12.1-ին կետով.

«12.1. Առաջադրանքը և դրա անբաժանելի մասը հանդիսացող տեխնիկական պայմանները կառուցապատողին տրամադրվում են անվճար:».

7) կարգի 13-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«13. Սույն կարգի 12-րդ կետով նախատեսված դեպքերում առաջադրանքի ելակետային և չափագրական նյութերի նախապատրաստման հետ կապված ծախսերը սահմանված կարգով և չափով

ներառվում են աճուրդի կամ մրցույթի կազմակերպման ծախսերում կամ սահմանվում են «գ» ենթակետով նշված որոշմամբ:».

8) ուժը կորցրած ճանաչել կարգի 14-րդ կետը.

9) կարգի 17-րդ կետը «վերակառուցմանե բառից հետո լրացնել «ամրակայման, վերանորոգման, վերականգնման» բառերով.

10) կարգի 19-րդ կետում՝

ա. «բոլոր դեպքերում» բառերը փոխարինել «պահանջներին համապատասխան» բառերով.

բ. կետը «20 օրը» բառերից հետո լրացնել «բացառությամբ սույն կարգի 19.1-ին կետով սահմանված դեպքերի:» բառերով.

11) կարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 19.1-ին կետով.

«19.1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ II կատեգորիայի դասակարգում ունեցող օբյեկտների համար առաջադրանքը տրամադրվում է կառուցապատողի հայտի ընդունման օրվանից 10-օրյա ժամկետում, իսկ III կատեգորիայի օբյեկտների համար՝ 15-օրյա ժամկետում:».

12) կարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 22.1-ին կետով.

«22.1. Սույն կարգով սահմանված ժամկետները հաշվարկվում են աշխատանքային օրերով:».

13) N 1 ձևի «ՀԱՅՏ» ձևաթղթի առաջին տողի տողատակը «կապիտալ նորոգում» բառերից հետո լրացնել «ամրակայում, վերականգնում,» բառերով.

14) N 2 ձևի «ՕԲՅԵԿՏ» տողի տողատակը «կապիտալ նորոգում» բառերից հետո լրացնել «ամրակայում, վերականգնում,» բառերը, իսկ «ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ» բաժնում «կառուցապատման խտություն» բառերը փոխարինել «կառուցապատման խտության գործակիցը» բառերով:

5. Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 21-ի «Բնակելի, հասարակական, արտադրական շենքերի ու շինությունների նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը սահմանելու մասին» N 812 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) որոշմամբ սահմանված կարգում՝

ա. 3-րդ կետի «ա» ենթակետը «առաջադրանքը» բառից հետո լրացնել «այդ թվում՝ դրա անբաժանելի մասը կազմող՝ օբյեկտի ինժեներական ենթակառուցվածքների նախագծման տեխնիկական պայմանները.» բառերով, «ե» ենթակետն ուժը կորցրած ճանաչել, իսկ երկրորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Նախագծողը կարող է պայմանագրով ամրագրված պայմանների համաձայն հավաքել սույն կետի «զ» և «դ» ենթակետերում նշված և սույն կարգի 10-րդ կետով սահմանված լրացուցիչ պայմանների (առկայության դեպքում) կատարման համար անհրաժեշտ ելակետային նյութերը կամ դրանց մի մասը:»,

բ. 6-րդ կետում «ծավալից, նշանակությունից, կարևորությունից և բարդությունից,» բառերը փոխարինել «՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ռիսկայնության աստիճանից (կատեգորիայից),» բառերով,

գ. կարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 6.1-ին և 6.2-րդ կետերով.

«6.1. Որպես կանոն, մեկ փուլով մշակվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ II և III ռիսկայնության աստիճանների (կատեգորիաների) դասակարգում ունեցող օբյեկտների, իսկ երկու փուլով՝ IV և V կատեգորիաների օբյեկտների նախագծային փաստաթղթերը՝ սույն կարգի 8-րդ կետով սահմանված դեպքերում և պայմաններով:

6.2. Պատվիրատուի և ճարտարապետահատակագծային առաջադրանք տրամադրող իրավասու մարմնի փոխադարձ համաձայնությամբ՝ սույն կարգի 6.1-ին կետով նախատեսված նախագծային փաստաթղթերի մշակման փուլայնությունը կարող է փոփոխվել՝ ելնելով նախագծային և շինարարական աշխատանքների կազմակերպման նպատակահարմարությունից:»,

դ. 12-րդ կետում «2002 թվականի փետրվարի 2-ի N 96 որոշմանը համապատասխան, որոնցով սահմանված դեպքերում փորձաքննությունը, պատվիրատուի և նախագծողի փոխադարձ համաձայնությամբ» բառերը փոխարինել ,Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մայիսի 6-ի «Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության իրականացման կարգը հաստատելու մասին» N 711-Ն որոշմանը համապատասխան, ընդ որում, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ II ռիսկայնության աստիճանի (կատեգորիայի) դասակարգում ունեցող օբյեկտների համար փորձաքննությունը» բառերով,

ե. 13-րդ կետում «համայնքի վարչական սահմաններում՝ համայնքի ղեկավարին, համայնքի վարչական սահմաններից դուրս գտնվող տարածքներում՝ մարզպետին, եթե օրենքով» բառերը փոխարինել «համայնքի ղեկավարին, եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ» բառերով,

զ. 13.2-րդ կետում «և 13.1-րդ կետերով» բառերը փոխարինել «կետով» բառով,

է. կարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 13.3-րդ և 13.4-րդ կետերով.

«13.3. Եթե նախագծվող տարածքի համար առկա է հասարակության իրազեկման ընթացակարգերը սահմանված կարգով անցած և հաստատված գոտևորման նախագիծ, ապա Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ II և III ռիսկայնության աստիճանների (կատեգորիաների) դասակարգում ունեցող օբյեկտների համար հասարակության լրացուցիչ իրազեկում չի պահանջվում:

13.4. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ IV և V ռիսկայնության աստիճանների (կատեգորիաների) դասակարգում ունեցող և բնապահպանական փորձաքննության ենթակա քաղաքաշինական օբյեկտների ճարտարապետաշինարարական նախագծերի մասին հասարակայնությունն իրազեկվում է բնապահպանական փորձաքննության անցկացման համար օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված ընթացակարգերի շրջանակներում:

13.5. Բոլոր դեպքերում կառուցապատողը պարտավոր է մինչև շինարարություն սկսելը, ինչպես նաև շինարարության ընթացքում համաձայնության գալ կառուցապատման հետևանքով վնասներ կրող սուբյեկտների հետ՝ հասցվելիք վնասների փոխհատուցման վերաբերյալ:»,

ը. 14-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«14. Սույն կարգի 13.3-րդ կետով սահմանված դեպքերում նախագծային փաստաթղթերը պետք է համաձայնեցվեն (ներառյալ սույն կարգի 15.1-ին կետի պահանջներով՝ շինարարության թույլտվության տրամադրումը) դրանք ներկայացվելու օրվանից՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ II և III ռիսկայնության աստիճանների (կատեգորիաների) դասակարգում ունեցող օբյեկտների համար՝ 10-օրյա ժամկետում.

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ IV և V ռիսկայնության աստիճանների (կատեգորիաների) դասակարգում ունեցող օբյեկտների համար՝ 15-օրյա ժամկետում:»,

բ. կարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 14.1-ին և 14.2-րդ կետերով.

«14.1. Սույն կարգի 13.3-րդ կետով չնախատեսված դեպքերում նախագծային փաստաթղթերի համաձայնեցման (ներառյալ՝ շինարարության թույլտվության տրամադրման) համար սույն կարգի 14-րդ կետով սահմանված ժամկետները հաշվարկվում են քաղաքաշինական ծրագրերի ու նախագծերի հրապարակման և ցուցադրման համար՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված 15-օրյա ժամկետի հաշվառմամբ:

14.2. Դիտողություններով վերադարձված նախագծային փաստաթղթերը համաձայնեցվում են (ներառյալ շինարարության թույլտվության տրամադրումը) դրանք կրկին ներկայացվելու օրվանից՝

1) սույն կարգի 14-րդ կետի 1-ին ենթակետում նշված օբյեկտների մասով՝ եռօրյա ժամկետում.

2) սույն կարգի 14-րդ կետի 2-րդ ենթակետում նշված օբյեկտների մասով՝ 7-օրյա ժամկետում:»,

ժ. 15.1-ին կետում «առաջարկություն» բառը փոխարինել «առարկություն» բառով,

ժա. կարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 16.1-ին կետով.

«16.1. Սույն կարգով սահմանված ժամկետները հաշվարկվում են աշխատանքային օրերով:».

2) որոշման N 2 հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5-րդ կետով.

«5. Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանները:»□

6. Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մայիսի 6-ի «Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննության իրականացման կարգը հաստատելու մասինե N 711-Ն որոշմամբ հաստատված կարգում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) կարգի 3-րդ կետում ,շենքերի և շինությունների ընթացիկ նորոգման, ներքին հարդարման և տարածքների բարեկարգման աշխատանքներըե բառերը փոխարինել «՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ցածր ռիսկայնության աստիճանի (I կատեգորիայի) դասակարգում ունեցող օբյեկտները (շինարարական աշխատանքները):» բառերով.

2) կարգի 4-րդ կետում ,շենքերի և շինություններիե բառերը փոխարինել «՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ միջին ռիսկայնության աստիճանի (II կատեգորիայի) դասակարգում ունեցող օբյեկտների» բառերով.

3) կարգի 9-րդ կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) հատուկ համալիր փորձաքննություն (Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ բարձրագույն ռիսկայնության աստիճանի (V կատեգորիայի) դասակարգում ունեցող օբյեկտների մասով).

2) համալիր փորձաքննություն (Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ բարձր ռիսկայնության աստիճանի (IV կատեգորիայի) դասակարգում ունեցող օբյեկտների մասով).

3) պարզ փորձաքննություն (Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ միջինից բարձր ռիսկայնության աստիճանի (III կատեգորիայի) դասակարգում ունեցող օբյեկտների մասով):».

4) կարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 10.1-ին կետով.

«10.1. Սույն կարգի 10-րդ կետով սահմանված օբյեկտները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ դասակարգվում են որպես բարձրագույն ռիսկայնության աստիճանի (V կատեգորիայի) օբյեկտներ:».

5) կարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 12.1-ին կետով.

«12.1. Սույն կարգի 12-րդ կետով սահմանված օբյեկտները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ դասակարգվում են որպես բարձր ռիսկայնության աստիճանի (IV կատեգորիայի) օբյեկտներ:».

6) կարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 24.1-ին կետով.

«24.1. Սույն կարգի 24-րդ կետով սահմանված օբյեկտները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ դասակարգվում են որպես միջինից բարձր ռիսկայնության աստիճանի (III կատեգորիայի) օբյեկտներ:».

7) կարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 25.1-ին կետով.

«25.1. Սույն կարգի 25-րդ կետով սահմանված օբյեկտները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ դասակարգվում են որպես միջին ռիսկայնության աստիճանի (II կատեգորիայի) օբյեկտներ:»:

7. Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 28-ի «Կենսագործունեության միջավայրի ծրագրվող փոփոխությունների մասին իրազեկման և հրապարակված քաղաքաշինական ծրագրերի ու նախագծերի քննարկմանը և որոշումների ընդունմանը հասարակայնության ներկայացուցիչների մասնակցության կարգը սահմանելու մասին» N 660 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) որոշման 2-րդ կետից հանել «ու գոտիավորման» բառերը, իսկ «բնակելի, հասարակական և արտադրական շենքերի ու շինությունների» բառերը փոխարինել «քաղաքաշինական օբյեկտների ճարտարապետաշինարարական» բառերով.

2) որոշմամբ հաստատված կարգում՝

ա. 2-րդ կետում «տեղական ինքնակառավարման մարմինները, համայնքների վարչական սահմաններից դուրս՝ պետական կառավարման տարածքային մարմինները» բառերը փոխարինել «համայնքների ղեկավարները» բառերով,

բ. 3-րդ կետի «ա» ենթակետը «լրատվության» բառից հետո լրացնել «(այդ թվում՝ էլեկտրոնային)» բառերով, իսկ «բ» ենթակետը «հրապարակումներով» բառից հետո՝ «տեղական ինքնակառավարման մարմինների ինտերնետային կայքերում տեղադրմամբ» բառերով,

գ. կարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 3.1-ին և 3.2-րդ կետերով.

3.1. Համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի նախագծման առաջադրանքները ևս ենթակա են հասարակության իրազեկման՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական համայնքների գլխավոր հատակագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու մասին» N 609-Ն և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի «Հայաստանի Հանրապետության գյուղական համայնքների պարզեցված

գլխավոր հատակագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու մասին» N 208-Ն որոշումներով հաստատված կարգերով:

3.2. Սահմանված կարգով հաստատված գոտևորման նախագծեր ունեցող տարածքներում կառուցվող օբյեկտների և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ բնապահպանական փորձաքննության ենթակա քաղաքաշինական օբյեկտների ճարտարապետաշինարարական նախագծերի մասին հասարակայնության իրազեկման դեպքերն ու կարգը սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 21-ի «Բնակելի, հասարակական, արտադրական շենքերի ու շինությունների նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը սահմանելու մասին» N 812 որոշմամբ սահմանված կարգի 13.3-րդ և 13.4-րդ կետերով:»,

դ. 4-րդ կետում «Պետական կառավարման տարածքային կամ տեղական ինքնակառավարման մարմիններն» բառերը փոխարինել «Համայնքների ղեկավարները (բացառությամբ սույն կարգի 3.2-րդ կետով սահմանված դեպքերի)» բառերով,

ե. 6-րդ կետում «պետական կառավարման համապատասխան տարածքային կամ տեղական ինքնակառավարման մարմին» բառերը փոխարինել «համապատասխան համայնքի ղեկավարին» բառերով,

զ. 7-րդ կետում «պետական կառավարման տարածքային կամ տեղական ինքնակառավարման մարմինը» բառերը փոխարինել «համայնքի ղեկավարը» բառերով, իսկ կետը «համապատասխան որոշում» բառերից հետո լրացնել «քաղաքաշինական ծրագիրը (կամ նախագիծը) համաձայնեցնելու, լրամշակման համար վերադարձնելու կամ մերժելու մասին» բառերով,

է. կարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 7.1-ին և 7.2-րդ կետերով.

«7.1. Սույն կարգով սահմանված ժամկետները հաշվարկվում են աշխատանքային օրերով:

7.2. Սույն կարգի 7-րդ կետով սահմանված՝ որոշման հետ կապված վեճերը լուծվում են օրենքով սահմանված կարգով:»:

8. Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի «Հայաստանի Հանրապետությունում շինարարության թույլտվության և քանդման թույլտվության կարգը հաստատելու մասին» N 91 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները՝

1) որոշման 1-ին կետի ,բե ենթակետում «և բարեկարգման աշխատանքների» բառերը փոխարինել «, տարածքների բարեկարգման և այլ ցածր ռիսկայնության աստիճանի (I կատեգորիայի) դասակարգում ունեցող օբյեկտների (շինարարական աշխատանքների)» բառերով.

2) որոշմամբ հաստատված կարգում՝

ա. 4-րդ կետի առաջին պարբերության մեջ «ընթացիկ նորոգման և ներքին հարդարման, ինչպես նաև բարեկարգման աշխատանքներ,» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ցածր ռիսկայնության աստիճանի (I կատեգորիայի) դասակարգում ունեցող օբյեկտները (շինարարական աշխատանքները)» բառերով, իսկ երկրորդ պարբերության մեջ «Շինարարության թույլտվություն չպահանջող շենքերի և շինությունների ընթացիկ նորոգման, ներքին հարդարման և բարեկարգման աշխատանքների» բառերը՝ «Ցածր ռիսկայնության աստիճանի (I կատեգորիայի) դասակարգում ունեցող օբյեկտների (շինարարական աշխատանքների)» բառերով,

բ. կարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 6.1-ին կետով.

«6.1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի «Ավարտված շինարարության շահագործման փաստագրման կարգը հաստատելու մասին» N 626-Ն որոշմամբ սահմանված՝ ավարտված շինարարական օբյեկտը հանձնաժողովի կողմից ընդունվելու դեպքերում շինարարության տեղության մեջ ներառվում է այդ հանձնաժողովի աշխատանքի համար նախատեսվող ժամկետը:»,

գ. 7-րդ կետում «համայնքի վարչական սահմաններից դուրս գտնվող տարածքներում՝ մարզպետը, եթե օրենքով» բառերը փոխարինել «եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ» բառերով,

դ. կարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 7.1-ին կետով.

«7.1. Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների փոխանցման դեպքում շինարարության թույլտվությունը և դրանով սահմանված պայմանները պահպանվում են լրիվ ծավալով:»,

ե. 10-րդ կետի երկրորդ նախադասության մեջ «Համայնքների ղեկավարները» բառերը փոխարինել «Իրավասու մարմինը» բառերով,

զ. կարգը 11-րդ կետի առաջին պարբերության «ընդ որում,» բառերից հետո լրացնել «սահմանված կարգով համաձայնեցված» բառերով, իսկ երկրորդ պարբերությունը հանել,

է. կարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 11.1-ին կետով.

«11.1. Կառուցապատողի գրավոր առարկության բացակայության դեպքում շինարարության թույլտվությունը տրվում է նախագծային փաստաթղթերի համաձայնեցման համար սույն կարգի 11-րդ կետում նշված որոշմամբ սահմանված ժամկետներում:»,

ը. 12-րդ կետը «Իրավասու մարմնի» բառերից առաջ լրացնել «Նախագծային փաստաթղթերը երկու փուլով մշակելու դեպքում» բառերով, իսկ «հաստատվող փուլի» բառերից հետո՝ «(առաջին փուլ՝ «Նախագիծ»)» բառերով,

թ. կարգի 16-րդ կետի երկրորդ պարբերության առաջին նախադասությունը «կառուցապատողը» բառից հետո լրացնել «սահմանված կարգով համաձայնեցված նախագծային փաստաթղթերն ստանալու օրվանից եռամսյա ժամկետում» բառերով,

ժ. 17-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«17. Սույն կարգի 15-րդ և 16-րդ կետերով սահմանված դեպքերում՝ իրավասու մարմինը տալիս է թույլտվություն կամ այն մերժում է (գրավոր իրազեկելով մերժման հիմքերի մասին) դիմումն ստանալու օրվանից՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ II և III ռիսկայնության աստիճանների (կատեգորիաների) դասակարգում ունեցող օբյեկտների համար՝ 5-օրյա ժամկետում.

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ IV և V ռիսկայնության աստիճանների (կատեգորիաների) դասակարգում ունեցող օբյեկտների համար՝ 10-օրյա ժամկետում.

ժա. կարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 17.1-ին կետով.

«17.1. Կրկնակի դիմելու և իրավասու մարմնի ներկայացրած պահանջները դիմողի կողմից կատարվելու դեպքում թույլտվության կամ մերժման մասին հարցը քննարկվում է ոչ ավելի, քան՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ II և III ռիսկայնության աստիճանների (կատեգորիաների) դասակարգում ունեցող օբյեկտների համար՝ եռօրյա ժամկետում.

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ IV և V ռիսկայնության աստիճանների (կատեգորիաների) դասակարգում ունեցող օբյեկտների համար՝ 7-օրյա ժամկետում:»,

ժբ. կարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 29.1-ին կետով.

«29.1. Սույն կարգով սահմանված ժամկետները հաշվարկվում են աշխատանքային օրերով:».

3) որոշման N 2 հավելվածի ցանկի՝

ա. վերնագրում «ՆԵՐՔԻՆ ՀԱՐԴԱՐՄԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ» բառերը փոխարինել «ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԵՎ ԱՅԼ ՑԱԾՐ ՌԻՍԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ (I ԿԱՏԵԳՈՐԻԱՅԻ) ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ (ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ)» բառերով,

բ. 18-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«18. Ավտոմոբիլային ճանապարհներ՝

ա) նստվածքների ուղղում՝ հարթեցմամբ և պնդեցմամբ,

բ) թափվածքների մաքրում,

գ) շեպերի ուղղում, հարթեցում և ամրացում,

դ) խրամուղիների ու ջրատար կանալների մաքրում,

ե) կողային առուների մաքրում, ակոսահանում և ամրացում,

զ) կողնակների լայնացում՝ ոչ բավարար լայնություն ունեցող տեղերում՝ մինչև սահմանված չափերը, ուղղում, ամրացում և լրացում,

է) ջրահեռացման վաքերի մաքրում, նորոգում և լրացում,

ը) ճանապարհային ծածկի առանձին տեղերի հարթեցում, ճեղքերի փակում,

թ) առանձին եզրաքարերի ուղղում, մայթերի նորոգում,

ժ) ճանապարհային նշանների և անվտանգության տարրերի նորոգում, փոխարինում և լրացում,

ժա) ճանապարհային նշագծման իրականացում,

ժբ) հենապատերի նորոգում և ուժեղացում,

ժգ) ճանապարհային ծածկի առանձին սալերի ուղղում և փոխում,

ժդ) ճանապարհային ծածկի փոսային նորոգում, քայքայված հատվածների փոխարինում,

ժե) արհեստական կառուցվածքների մաքրում, նորոգում և փոխարինում՝ սույն ցանկի 17-րդ կետի 3-րդ ենթակետի «գ»-«զ» պարբերություններով սահմանված ծավալներով,

ժզ) հողային պաստառի լայնացում՝ ոչ բավարար լայնություն ունեցող տեղերում՝ մինչև սահմանված չափերը:

Սույն կետով սահմանված աշխատանքների իրականացման ժամկետները՝ երթևեկությունը խոչընդոտելու կամ սահմանափակելու դեպքերում, համաձայնեցվում են Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության և համայնքի ղեկավարի հետ:»

9. Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 8-ի ,Ավարտված շինարարության շահագործման փաստագրման կարգը հաստատելու մասինե N 626-Ն որոշմամբ հաստատված կարգում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) 1-ին կետում «դեպքերի» բառը փոխարինել «ցածր ռիսկայնության աստիճանի (I կատեգորիայի) դասակարգում ունեցող օբյեկտների» բառերով.

2) 3-րդ կետում «համայնքում՝ համայնքի ղեկավարը, համայնքի վարչական սահմաններից դուրս գտնվող տարածքներում՝ մարզպետը, եթե օրենքով» բառերը փոխարինել «համայնքի ղեկավարը, եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ» բառերով.

3) 4-րդ կետում «օբյեկտների, քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների, ինչպես նաև» բառերը փոխարինել «կամ» բառով, իսկ կետը «շահերին առնչվող» բառերից հետո լրացնել «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ բարձրագույն ռիսկայնության աստիճանի (V կատեգորիայի) դասակարգում ունեցող» բառերով.

4) 8-րդ կետում «ինչպես նաև, անկախ ֆինանսավորման աղբյուրից՝ պետական նպատակային ծրագրերի շրջանակներում, սահմանված կարգով հաստատված պետական ցուցակներում ընդգրկված հանրապետական նշանակության պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի սեպտեմբերի 19-ի N 882 որոշմամբ հաստատված հատուկ օբյեկտների և կարևորագույն նշանակություն ունեցող» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ բարձր ռիսկայնության աստիճանի (IV կատեգորիայի) դասակարգում ունեցող» բառերով.

5) 11-րդ կետի առաջին պարբերության մեջ «և 3.1-րդ կետերով» բառերը փոխարինել «կետով» բառով, իսկ երկրորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին կառուցվող շինարարական օբյեկտներն ընդունող հանձնաժողովների կազմում լրացուցիչ ընդգրկվում են նաև՝

1) Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության ներկայացուցիչը (գնումների բազային միավորի 250-ապատիկը գերազանցող դեպքերում).

2) համապատասխան մարզպետարանի ներկայացուցիչը (սույն կետի առաջին պարբերության համաձայն ներառված չլինելու դեպքում):».

6) կարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 11.1-ին և 11.2-րդ կետերով.

«11.1. Տարածքային բաժնի և շահագրգիռ պետական մարմինների մասնակցությունը հանձնաժողովի աշխատանքին համարվում է այդ մարմինների կողմից օրենքով իրենց լիազորությունների սահմաններում կատարված ավարտված շինարարական օբյեկտի վերջնական ստուգում:

Սույն կարգի 13-րդ կետին համապատասխան ընդունող հանձնաժողովի ակտն ստորագրվելուց հետո այդ օբյեկտում տվյալ շինարարությանը վերաբերող այլ ստուգումներ չեն կատարվում՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կատարման նկատմամբ հսկողության և վերահսկողության գործառույթների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված՝ ավարտական արձանագրության կազմման դեպքի:

11.2. Շահագործող կազմակերպությունների կողմից, սույն կարգի 13-րդ կետին համապատասխան, ընդունող հանձնաժողովի ակտն ստորագրելը հիմք է այդ կազմակերպությունների կողմից համապատասխան ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելու համար:».

7) կարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 15.1-ին կետով.

«15.1. Տարածքային բաժինը և շահագրգիռ մարմինները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ իրենց վերապահված իրավասության սահմաններում տալիս են եզրակացություն՝ հավաստելով ավարտված շինարարական աշխատանքների համապատասխանությունը հաստատված նախագծային փաստաթղթերին, տրամադրված տեխնիկական պայմաններին և սույն կարգի պահանջներին՝ դիմումն ստանալու օրվանից՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ II և III ռիսկայնության աստիճանների (կատեգորիաների) դասակարգում ունեցող օբյեկտների համար՝ եռօրյա ժամկետում.

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ IV և V ռիսկայնության աստիճանների (կատեգորիաների) դասակարգում ունեցող օբյեկտների համար՝ 5-օրյա ժամկետում:».

8) 16-րդ կետից հանել առաջին նախադասությունը, իսկ երկրորդ նախադասության մեջ «Ընդ որում,» բառերը փոխարինել «Սույն կարգի 15.1-ին կետին համապատասխան» բառերով.

9) 20-րդ կետում երկրորդ «ինչպես նաև» բառերը փոխարինել «փոստային բաժանորդային պահարանների տեղադրումն ու» բառերով.

10) 22-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«22. Իրավասու մարմինը ներկայացված փաստաթղթերի հիման վրա ձևակերպում է շահագործման ակտը՝ դիմումն ստանալու օրվանից՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ II և III ռիսկայնության աստիճանների (կատեգորիաների) դասակարգում ունեցող օբյեկտների համար՝ եռօրյա ժամկետում.

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ IV և V ռիսկայնության աստիճանների (կատեգորիաների) դասակարգում ունեցող օբյեկտների համար՝ 5-օրյա ժամկետում:».

11) կարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 22.1-ին կետով.

«22.1. Դիմումի մերժման դեպքում իրավասու մարմինը սույն կարգի 22-րդ կետով սահմանված ժամկետներում գրավոր պատասխանում է դիմողին՝ նշելով մերժման պատճառները, ընդ որում, մերժումը կարող է պատճառաբանվել միմիայն սույն կարգի 21-րդ կետի պահանջներին չհամապատասխանելու հիմքով:».

12) 26-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«26. Սույն կարգով սահմանված ժամկետները հաշվարկվում են աշխատանքային օրերով:»:

10. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Տ. Սարգսյան**

2011թ. Մարտի 23
Երևան

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2002 թվականի
փետրվարի 2-ի N 91 որոշման

Ց Ա Ն Կ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՄԱՆ, ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԵՎ ԱՅԼ ՑԱԾՐ ՌԻՍԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ (Լ ԿԱՏԵԳՈՐԻԱՅԻ) ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ (ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ), ՈՐՈՆՑ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՉԻ ՊԱՀԱՆՋՎՈՒՄ

(Վերնագիրը փոփ. 03.03.11 N 257-Ն)

ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

I. ՇԵՆՔԵՐ

1. Հիմքեր

ա) ճկուղային հարկերը շրջափակող արտաքին պարիսպների առանձին քարերի (աղյուսների) փոխում, փոխարինում,

բ) շենքերի ճկուղների ներսից՝ հիմնապատերի առանձին թուլացած քարերի (աղյուսների) ամրացում,

գ) հավաքովի և միաձույլ բետոնե հիմնապատերի անհարթությունների և խառռոչների հարդարում,

դ) երեսապատում և հիմնապատերի նորոգում՝ ճկուղային հարկերի ներսի կողմից (քարերի վերաշարում՝ ընդհանուր մակերեսի 2 տոկոսից ոչ ավելի),

ե) ճկուղների ներսի կողմից հիմնապատերի սվաղում:

2. Պատեր և սյուներ

ա) պոկված կամ թուլացած առանձին քարերի (աղյուսների) ամրացում և նորերի տեղադրում շաղախի օգնությամբ,

բ) քարե (աղյուսե) պատերի նեղ ճեղքերի շաղախալցում,

գ) երկաթբետոնե պատերի և սյուների ամրանների պաշտպանիչ շերտերի վերականգնում,

դ) խոշորաբլոկային և խոշորապանելային պատերի ուղղահայաց և հորիզոնական ծայրակցատեղերի մաքրում և շաղախապատում՝ օդահոսքերից ու խոնավությունից ներքին տարածքներն ու մետաղական ամրացումները մեկուսացնելու նպատակով,

ե) քարե ցոկոլների նորոգում,

զ) քարե (աղյուսե) և բետոնե սյուների անկյունների և պաշտպանիչ անկյունների տեղադրում,

է) կլոր կամ քառանիստ գերաններից ու տախտակներից կառուցված պատերի խծուծվածքների փոխում, ճեղքերի և արանքների փակում՝ կանեփաթելի խրձերով,

ը) փայտյա կոնստրուկցիաների մետաղական ձգանների փոխում կամ նորերի տեղադրում:

3. Միջնորմներ

ա) թուլացած միջնորմների ամրացում,

բ) բոլոր տեսակի միջնորմների հնացած կոնստրուկցիաների նորոգում, փոխում,

գ) միջնորմների վերնամասերում և դրանց պատերի հետ միացման տեղերում նստվածքից առաջացած ճեղքերի փակում,

դ) փայտյա ցանցավոր միջնորմների առանձին ջարդված ցանցերի փոխարինում,

ե) փայտյա մաքուր միջնորմների միակցում (վերահավաքում),

զ) միջնորմների ապակեպատված հատվածներում ջարդված ապակիների փոխարինում:

4. Կտուրներ և ծածկեր

ա) ծպեղագերանների սարքերի ուժեղացում՝ տախտակի կտորներով կամ այլ լրացուցիչ ամրակապերով,

բ) կտուրների փայտյա կոնստրուկցիաների ամրացում՝ կցանումների, ծայրակցվածների և այլ միացումների թուլացած տեղերում լրացուցիչ հեղույսների և երկաթակապերի տեղադրմամբ,

գ) ծածկերի փայտյա ֆերմաների հեղույսների ձգում,

դ) երկաթբետոնե կոնստրուկցիաների (ֆերմաներ, հեծաններ, ծածկասալեր) մերկացած ամրանների պաշտպանիչ շերտերի վերականգնում,

ե) ապակեպատ ձեռնաելուստների շրջանակների բացման և փակման հարմարանքների նորոգում,

զ) փայտյա կոնստրուկցիաների հակասեպտիկ և հակահրդեհային ծածկապատումներ,

է) ձեղնահարկային լուսամուտների նորոգում,

ը) կտուր տանող ելքերի վերականգնում կամ նորոգում,

թ) մետաղյա կտուրների սանդերքների ու թիթեղաթերթերի եզրերի ամրացում՝ դրանց գագաթների ու տակամասերի ծածկմամբ,

ժ) մետաղյա ծածկի վրա կարկատանների տեղադրում,

ժա) կտուրների մասնակի (կտուրի ընդհանուր մակերեսի մինչև 10 տոկոսը) փոխում,

ժբ) մետաղյա ծածկերի առանձին մասերի նորոգում (ընդհանուր մակերեսից մինչև 10 տոկոսը փոխելով նորով),

ժգ) կղմինդրե և այլ հատասալիկներից հավաքվող ծածկերի նորոգում՝ առանձին կղմինդրների ու սալիկների փոխմամբ,

ժդ) գլանափաթեթավոր նյութերից ծածկի (փափուկ կտուր) մասնակի նորոգում,

ժե) նավդանների, ջրհորդանների, ջրաթափերի նորոգում, առանձին պոկված թիթեղների ամրացում,

ժզ) ծխնելույզների, ծխաօդափոխիչ բլոկների և կտուրներից վեր բարձրացող այլ մասերի թիթեղապատվածքի նորոգում կամ փոխում, ինչպես նաև ծխաօդափոխիչ հորանների և կոյուղային կանգնակների գլխանոցների նորոգում,

ժէ) ձեղնասանդուղքների նորոգում և վերականգնում,

ժը) թիթեղյա կտուրների պարբերաբար ներկապատում,

ժթ) գլանափաթեթավոր նյութերից ծածկերի (փափուկ կտուրների) նավթաբիտումային մածուկապատում,

ի) ներքին ջրատարների ձագարափոսերի և վրադիրների նորոգում,

իա) ապակեպատ ձեռնաելուստների շրջանակների բացման և փակման սարքավորումների փոխում, փոխարինում,

իբ) տանիքների փոխում (նորացում)՝ առանց կոնստրուկտիվ փոփոխությունների:

5. Միջհարկային ծածկեր և հատակներ

ա) ծածկի երկաթբետոնե կոնստրուկցիաների (հեծաններ, հենագերաններ, սալեր), պաշտպանիչ շերտի վերականգնում,

բ) ցրտահարման ենթակա մետաղյա հեծանների լրացուցիչ ջերմամեկուսացում,

գ) ցեմենտային, բետոնե և ասֆալտապատ հատակների փոսերի լցում,

դ) հատակների ու դրանց հիմնատակերի նորոգում,

ե) կերամիկական, ցեմենտե, մարմարե և այլ սալիկավոր հատակների վնասված սալիկների փոխում, փոխարինում և պոկվածների տեղադրում,

զ) տախտակե հատակների խտացում, փոխում, փոխարինում,

է) լինոլեումային և գորգատիպ սինթետիկ փաթեթանյութային հատակների պոկված տեղերի սոսնձում, փոխում,

ը) մանրատախտակից հատակների նորոգում՝ առանձին մանրատախտակների փոխարինմամբ,

թ) պոկված շրիշակների ամրացում կամ փոխում,

ժ) ցեմենտե շրիշակների նորոգում,

ժա) ձեղնահարկային ծածկերի լրացուցիչ ջերմամեկուսացում:

6. Լուսամուտներ, դռներ ու դարպասներ

ա) դռների ու դարպասների ծռված փեղկերի ուղղում և դրանց ամրացում՝ փայտյա շերտաձողիկների կամ մետաղյա անկյունակների միջոցով,

բ) փեղկերի ամրացում՝ դրանց առանձին տախտակների փոփոխմամբ,

գ) նոր օղանցքների տեղադրում,

դ) կոտրված ապակիների փոխում, փոխարինում, ակոսատների ծածկում,

ե) լուսամուտների և դռների շրջանակների ու պատերի միջև եղած արանքների խծուծում (լցում) կանեփաթելի խրձերով, շաղախներով՝ փայտաշեն և քարաշեն կառույցներում,

զ) լուսամուտագոգերի տակերի արանքների փակում,

է) լուսամուտների և դռների փչացած պարագաների փոխում, նորի տեղադրում,

ը) մուտքի դռների և դարպասների ջերմամեկուսացում,

թ) արտաքին դռների զսպանակների և զսպիչների տեղադրում, ներքին դռների փոխում, փոխարինում,

ժ) արտաքին լուսամուտների և արտաքին դռների փոխում, փոխարինում, արտաքին պատերի բացվածքներում ցուցափեղկերի փոփոխություն,

ժա) պատշգամբների բազրիքների արտաքին տեսքի ձևափոխում՝ առանց կոնստրուկտիվ փոփոխությունների:

7. Սանդուղքներ և սանդղամուտքեր

ա) բետոնե և քարե սանդուղքների, աստիճանների, թեքանների ու հարթակների խարշերի և փոսերի լցում,

բ) փայտաշեն սանդուղքների ու հարթակների առանձին մաշված տախտակների փոխարինում,

գ) սանդուղքաթաժնի բռնաձողերի և ճաղասարքերի ամրացում, առանձին մասերում բռնաձողերի և այլ մասերի փոխարինում:

8. Ներքին հարդարում

ա) պատերի և առաստաղների սվաղների նորոգում,

բ) պատերի երեսապատման նորոգում, փոխում, փոխարինում,

գ) զետեղարանների և առանձին կոնստրուկցիաների ներկում,

դ) ներքին հարդարանքների փոխում, փոխարինում:

9. Ճակատապատեր

ա) շենքերի ճակատների երեսապատման պոկվող ու թուլացած սալիկների, քարերի, ծեփածո և քարատաշ ճարտարապետական դետալների, բազրիքների, քիվերի և այլ մասերի ամրացում,

բ) երեսապատումների նորոգում, փոխում, փոխարինում,

գ) շենքերի արտաքին սվաղի առանձին մասերի նորոգում,

դ) շենքերի նավդանների, ջրհորդանների, ջրափների, ջրընդունիչ ծագարների, քիվերի և այլ ելուստների թիթեղածածկերի նորոգում ու պահպանում,

ե) շենքերի ճակատապատերի ներկում,

զ) կայուն բաղադրությամբ ներկված կամ երեսապատված ճակատապատերի մաքրում, լվացում՝ փոշուց ու մրից,

է) քիվերի և այլ դեկորատիվ էլեմենտների լրիվ վերականգնում,

ը) ծեփածո էլեմենտների վերականգնում,

թ) ճակատապատերի մաքրում:

10. Վառարաններ

ա) վառարանների մանր նորոգումներ՝ դրա սարքավորումների մասնակի փոխմամբ, փլվածքների հեռացում և արտաքին հարդարում,

բ) վառարանների մեջ փլվածքների վերականգնում,

գ) ծխնելույզների և ծխանցքների նորոգում,

դ) ծխնելույզների ներկում:

11. Ջեռուցում

ա) ջեռուցման խողովակաշարերի և սարքերի լվացում ու կարգավորում,

բ) ջեռուցիչ սարքերի և խողովակաշարերի առանձին հատվածների անսարքությունների նորոգում,

գ) ընդարձակիչ բաքերի ջերմամեկուսացում,

դ) խողովակաշարերի և սարքերի ներկում:

12. Օդափոխություն

ա) օդատարների մասնակի փոխում,

բ) օդատարներում ներծծումների վերացում,

գ) օդափոխիչների, օդատարների, կալորիֆերների, էլեկտրաշարժիչների, հենասարքերի, հորանների, ճաղերի և այլ սարքերի նորոգում, փոխում,

դ) օդատարների և օդափոխիչ սարքավորումների ներկում,

ե) էլեկտրաշարժիչների նորոգում:

13. Ջրամատակարարում և կոյուղի

ա) ջրատար և կոյուղու խողովակների ու սարքերի հոսքերի և կաթոցների վերացում,

բ) ջրատար և կոյուղու խողովակաշարերի ամրացում և մասամբ նորոգում,

գ) ցրտահարվող մասերում խողովակաշարերի ջերմամեկուսացում,

դ) կոյուղու խողովակների և սարքերի մաքրում,

ե) խողովակաշարերի հատվածների նորոգում,

զ) առանձին սարքերի փոխում (զուգարանակոնքեր, կռիկներ, լվացարաններ, կոնքեր, ցայտաղբյուրներ, ծորակներ և այլն):

14. Տաք ջրամատակարարում և կապ

ա) ջերմափոխանակիչների և գալարախողովակների մաքրում նստվածքներից ու աղտոտումից,

բ) պոմպային և մոտորային կայանների մանր նորոգում,

գ) ջրածորակների փոխում, խողովակաշարերի ջերմամեկուսացում և այլ փոքրածավալ աշխատանքների կատարում «Ջեռուցում» ու «Ջրամատակարարում և կոյուղի» բաժիններում թվարկված աշխատանքներին համապատասխան,

դ) խողովակաշարերի մասերի փոխում:

15. Էլեկտրալուսավորում և կապ

ա) ներքին կախված էլեկտրասալերի ձգում և լրացուցիչ ամրակապերի դնում՝ տեղակայված պիտույքակազմերի փոխարինմամբ (անջատիչներ, կոթառներ, վարդակներ),

բ) էլեկտրահաղորդալարերի առանձին հատվածների և էլեկտրասարքերի փոխում,

գ) պատերի, միջնորմների, միջհարկային ծածկերի նորոգման ժամանակ էլեկտրասնուցիչ ցանցի ապամոնտաժում և վերականգնում,

դ) խմբային բաշխիչ և ապահովիչ վահանակների մանր նորոգում:

II. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ (ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ)

16. Ջրմուղ-կոյուղու կառուցվածքներ

1) ցանցեր, խողովակաշարեր և արմատուրա

ա) առանձին լայնակների կարանախցում,

բ) պողպատյա խողովակների առանձին ծայրակցատեղերի եռակցում կամ զոդում,

գ) արտահոսքի վերացման նպատակով առանձին տեղերի խցանում՝ կցորդիչներ, խամուտներ, բանդաժներ տեղադրելով, կամ առանձին խողովակների փոխարինում,

դ) առանձին խողովակների փոխում, փոխարինում (պահպանելով խողովակների տրամագիծը),

ե) խցակների լցում, հեղույսների ձգում և ձևավոր մասերի ու ամրանաձողերի առանձին խցակների փոխում,

զ) ձևավոր մասերի կցորդային միացումներում ու ամրանաձողերում միջադիրների և հեղույսների փոխում, փոխարինում,

է) ջրածորանների ամրակապերի նորոգում,

ը) ջրաբաշխիչ աշտարակների նորոգում.

2) հորեր

ա) հորերի պատերի առանձին ճեղքերի վերացում,

բ) առանձին ընկնող աղյուսների խցում,

գ) առանձին երթային բռնակների փոխում,

դ) աստիճանների նորոգում,

ե) վաքերի սվաղների նորոգում, վերականգնում,

զ) անցքերի նորոգում,

է) մտոցների քանդված մասերի նորոգում.

3) ջրաբաշխման և հիդրոտեխնիկական կառուցվածքներ

3.1) պատվարներ, ամբարտակներ, ջրընկեցքներ, ջրանցքներ

ա) քետոնե ջրթողիչների և ամբարտակի ճեղքերի վերալցում,

բ) ափեր ամրացնող ծածկույթի և շեղությունների ամրանների վնասվածքների վերացում (ընդհանուր մակերեսի մինչև 2 տոկոսի չափով),

գ) փայտյա կոնստրուկցիաների առանձին էլեմենտների փոխում,

դ) մետաղյա կոնստրուկցիաների հիմքային մասերի ամրացում և դրանց ներկում,

ե) երկաթբետոնե կոնստրուկցիաների վերջրյա մասերի պաշտպանիչ շերտերի վերականգնում,

զ) հողե կառուցվածքների ողողված շեղությունների լցում.

3.2) ջրային հորատանցքեր

ա) վերին ջրընդունիչ բաքի մաշված մասերի փոխարինում,

բ) ջրամուղ և օդամուղ խողովակների հիմնանցքերի խորացում կամ փոքրացում,

գ) ջրամուղ և օդամուղ խողովակների փոխում.

4) մաքրման կառուցվածքներ

ա) սվաղի առանձին հատվածների վերանորոգում՝ ճեղքերի փոխմամբ և երկաթայնացմամբ (սվաղված ընդհանուր մակերեսի մինչև 10 տոկոսի սահմաններում),

բ) մանր ճեղքերի հարդարում,

գ) մտոցների և աստիճանների նորոգում ու ներկում,

դ) առանձին բռնակների օգտագործում,

ե) ֆիլտրերի փողրակների կողերի երկրաչափական ձևերի վերականգնում,

զ) օդատարների նորոգում,

է) առանձին տեղերում մեկուսացումների նորոգում,

ը) երկհարկ տիղմազտիչների փողրակների նորոգում, փայտյա փողրակների առանձին տախտակների փոխում,

թ) կենսաբանական զտիչների շարվածքի առանձին մասերի նորոգում,

ժ) մղանցքների և խցերի հիդրոմեկուսացման փոխում.

5) խողովակաշարեր և ամրանաձողեր

ա) առանձին խողովակների ծայրակցատեղերի եռակցում կամ զոդում,

բ) առանձին խողովակների փոխում,

գ) խողովակաշարերի ջերմամեկուսացման և ջրամեկուսացման նորոգում, վերականգնում, փոխում,

դ) խցակների լցում, ամրանաձողի առանձին մասերի փոխում, հեղույսների ձգում,

ե) կցամիացումների հեղույսների և ներդիրների փոխում,

զ) ձևավոր մասերի, փականների, խտացուցիչների նորոգում, փոխում,

է) շարժական և անշարժ հենարանների փոխում:

16.1. Գազափոխադրում և գազամատակարարում.

ա) գազաֆիկացված բնակավայրերում շենքերի և շինությունների ներսում գոյություն ունեցող ցածր ճնշման բաշխիչ գազատարից մինչև գազասարքերը միացման շինարարական-մոնտաժային աշխատանքներ,

բ) գազատարների խողովակաշարերի տեղային վթարային վերանորոգման, վերականգնման շինարարական-մոնտաժային աշխատանքներ,

գ) գազատարների շարժական և անշարժ հենարանների վերանորոգում և վերականգնում,

դ) գազային սարքավորումների (արմատուրների) փականների նորոգում և փոխարինում,

ե) էլեկտրաքիմիական պաշտպանիչ կայանների նորոգում և փոխարինում:

(16.1 կետը լրաց. 16.09.10 N 1335-Ն)

16.2. 16.1-ին կետով նախատեսված աշխատանքներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 22-ի «Անվտանգության կանոնները գազի տնտեսությունում» տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 2399-Ն որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխան:

(16.2 կետը լրաց. 16.09.10 N 1335-Ն)

17. Երկաթուղիներ, այդ թվում՝ մերձատար և ներգործարանային

1) հողային պատնեշ

ա) թեքությունների մաքրում և բարեկարգում,

բ) դիտահորերի, կանալների, խրամառուների, վաքերի արագահոսների մաքրում և կարգավորում,

գ) ջրացամաքիչների մաքրում՝ գարնանային ջրհոսքերից հետո,

դ) չիմապատվածքների, սալարկների, ճեղանների մաքրում և մանր նորոգում,

ե) լիցքի ֆիլտրող մասի մաքրում և մանր շտկում,

զ) հողային պաստառի լայնացում՝ ոչ բավարար լայնություն ունեցող տեղերում՝ մինչև սահմանված չափերը,

է) հողային պաստառի վերականգնում՝ սարքերի, ողողատների, փլուզումների և ճահճուտների տեղերում.

2) երկաթուղիների վերին կառուցվածքներ

ա) նստվածքային, թեքված և շեղված տեղամասերի ուղղում,

բ) փայտակոճերի մտցնում գծերի տակ,

գ) ռելսերի ուղղում,

դ) ամրացումների փոխում,

ե) ռելսերի ծայրանքների կարգաբեկում,

զ) բացվածքների ձգում,

է) փայտակոճերի նորոգում,

ը) փայտակոճերի ցրում,

թ) բալաստային պրիզմաների կարգաբեկում,

ժ) գծային ամրակապերի մաքրում և յուղում,

ժա) առանձին փայտակոճերի փոխարինում,

ժբ) ճաքած ռելսերի փոխարինում,

ժգ) անցատեղերի առանձին էլեմենտների փոխարինում,

ժդ) ուղեցուցանիշների, ուղեփակոցների և կարճայուների ներկում,

ժե) սլաքային անցատեղերի նորոգում՝ առանձին էլեմենտների փոխմամբ.

3) արհեստական կառուցվածքներ (կամուրջներ, թունելներ, խողովակներ)

ա) հեղույսների ձգում և փոխում,

բ) գլանանիվների կարգաբեկում,

գ) վնասված հատային էլեմենտների փոխում,

դ) հենարանների ճաքերի փակում,

ե) հենարանների արտաքին մասերի տորկրետացում կամ ցեմենտացում,

զ) առանձին պոկված կամ տեղաշարժված քարերի տեղերի ցեմենտում:

18. Ավտոմոբիլային ճանապարհներ՝

ա) նստվածքների ուղղում՝ հարթեցմամբ և պնդեցմամբ,

բ) թափվածքների մաքրում,

գ) շեպերի ուղղում, հարթեցում և ամրացում,

դ) խրամուղիների ու ջրատար կանալների մաքրում,

ե) կողային առուների մաքրում, ակոսահանում և ամրացում,

զ) կողնակների լայնացում՝ ոչ բավարար լայնություն ունեցող տեղերում՝ մինչև սահմանված չափերը, ուղղում, ամրացում և լրացում,

է) ջրահեռացման վաքերի մաքրում, նորոգում և լրացում,

ը) ճանապարհային ծածկի առանձին տեղերի հարթեցում, ճեղքերի փակում,

թ) առանձին եզրաքարերի ուղղում, մայթերի նորոգում,

ժ) ճանապարհային նշանների և անվտանգության տարրերի նորոգում, փոխարինում և լրացում,

ժա) ճանապարհային նշագծման իրականացում,

ժբ) հենապատերի նորոգում և ուժեղացում,

ժգ) ճանապարհային ծածկի առանձին սալերի ուղղում և փոխում,

ժդ) ճանապարհային ծածկի փոսային նորոգում, քայքայված հատվածների փոխարինում,

ժե) արհեստական կառուցվածքների մաքրում, նորոգում և փոխարինում՝ սույն ցանկի 17-րդ կետի 3-րդ ենթակետի «գ»-«զ» պարբերություններով սահմանված ծավալներով,

ժզ) հողային պաստառի լայնացում՝ ոչ բավարար լայնություն ունեցող տեղերում՝ մինչև սահմանված չափերը:

Սույն կետով սահմանված աշխատանքների իրականացման ժամկետները՝ երթևեկությունը խոչընդոտելու կամ սահմանափակելու դեպքերում, համաձայնեցվում են Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության և համայնքի ղեկավարի հետ:

(18-րդ կետը խմբ. 03.03.11 N 257-Ն)

19. Էլեկտրական ցանցեր և կապ

ա) կախված հաղորդալարերի վերածգում,

բ) հաղորդալարերի կտրված տեղերի վերացում,

գ) առանձին մեկուսիչների փոխարինում,

դ) կողմնական ընձյուղների վրա լրացուցիչ ոլորքների տեղադրում,

ե) երկաթբետոնե և բետոնե կողմնական ընձյուղների ճաքերի և այլ վնասվածքների վերացում,

զ) առանձին հենասյուների ուղղում,

է) առանձին ընձյուղների ուղղում և փոխում:

Ընթացիկ նորոգման աշխատանքներն ապահովում են շենքերի, շինությունների, ինժեներական սարքավորումների, ինչպես նաև դրանց առանձին մասերի սիստեմատիկ պահպանումն ու շահագործման որակը և ներառում են վնասվածքների ու անսարքությունների վերացման կանխարգելիչ միջոցառումներ:

Ընթացիկ նորոգման աշխատանքների կազմակերպման համար կարող է կատարվել շենքերի և շինությունների ուսումնասիրություն, կազմվել թերությունների մասին ակտ, աշխատանքների ցանկ և, անհրաժեշտության դեպքում, նախահաշիվ:

Շենքերի արտաքին տեսքը փոփոխող ընթացիկ նորոգման սույն հավելվածում աստղանիշով նշված աշխատանքների համար կազմվում է էսքիզային նախագիծ և համաձայնեցվում Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի N 91 որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետում նշված իրավասու մարմնի հետ:

ՆԵՐՔԻՆ ՀԱՐԴԱՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

ա) պատերի և առաստաղների սվաղում, ինչպես նաև գիպսե սալիկներով երեսապատում,

բ) պատերի և առաստաղների ներկում,

գ) պատերի պաստառապատում,

դ) սանհանգույցների պատերի՝ կերամիկական սալիկներով երեսապատում,

ե) սանհանգույցներում կախովի առաստաղների տեղադրում,

զ) հատակների ցեմենտապատում և ծածկույթի (մանրատախտակ՝ փայտյա, լինոլեում, կերամիկական, մարմարե, ցեմենտե և այլ սալիկներ) պատրաստում,

է) ներքին դռների, լուսամուտների և լուսամուտագոգերի ներկում,

ը) ջրի, կոյուղու, ջեռուցման խողովակաշարերի և ջեռուցման սարքերի ներկում,

թ) անհատական բնակելի տների և բնակարանների ներքին հարդարման աշխատանքներն ամբողջությամբ:

Շենքերի և շինությունների ներքին հարդարման աշխատանքներն ապահովում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում շինարարական աշխատանքները ոչ լրիվ կազմով իրականացնելիս նոր կառուցված շենքերի ներքին հարդարումը, ինչպես նաև գոյություն ունեցող շենքերի ներքին հարդարման լրիվ վերափոխումը կամ վերականգնումը:

Ներքին հարդարման աշխատանքների կազմակերպման համար կարող են կատարվել շենքերի և շինությունների ուսումնասիրություն, չափումներ, կազմվել աշխատանքների ցանկ և, անհրաժեշտության դեպքում, նախահաշիվ:

Ճարտարապետահատակագծային և (կամ) նախագծային առաջադրանքով ինտերիերի մշակման պայման նախատեսվելու դեպքում ներքին հարդարման աշխատանքները ներառվում են գեղարվեստակոնստրուկտորական նախագծային փաստաթղթերի կազմում:

ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

ա) շենքերին ու շինություններին հարակից բակային տարածքների կանաչապատում,

բ) *մայթերը և շենքերը շրջափակող սալահատակների փոխում, փոխարինում,

գ) *մայթերի առանձին եզրաքարերի ուղղում, վերաշարում, փոխում, փոխարինում,

դ) *մայթերն ու շենքերը շրջափակող տարածքների ասֆալտապատում և նորոգում՝ բացառելով հատակագծային նիշերի փոփոխությունները,

ե) *փոքր ճարտարապետական ձևերի և բակային կառուցվածքների (ծածկարան, ճոճանակ, ցայտաղբյուր, խաղահրապարակ, նստարաններ, աղբարկղ և այլն) տեղադրում,

զ) փոքր ճարտարապետական ձևերի և բակային կառուցվածքների (ծածկարան, ճոճանակ, ցայտաղբյուր, խաղահրապարակ, նստարաններ, աղբարկղ և այլն) նորոգում, առանձին մասերի փոխարինում,

է) *թեթև կոնստրուկցիաներով (մետաղյա խողովակ, ցանց և ճաղեր) ցանկապատում և դրանց փոխում, փոխարինում,

ը) անհատական բնակելի տների փակ ներբակային տարածքների լրիվ բարեկարգում (կանաչապատում, ծառատնկում, մայթեր, ծառուղիներ, ծածկարան, ճոճանակ, խաղահրապարակ, նստարաններ և այլն):

Շինարարության թույլտվություն չպահանջող բարեկարգման աշխատանքներն ապահովում են տարածքների կանաչապատումը, ծառատնկումը, ինչպես նաև բարեկարգման տարրերի վերականգնումը, նորոգումը, փոխումը, փոխարինումը:

Բարեկարգման աշխատանքների կազմակերպման համար կարող է կատարվել տարածքների չափագրում, կազմվել անհրաժեշտ աշխատանքների ցանկ, իսկ վերականգնման, նորոգման, փոխարինման աշխատանքների դեպքում՝ թերությունների մասին ակտ:

Ընդհանուր օգտագործման տարածքներում բարեկարգման սույն հավելվածում աստղանիշով նշված աշխատանքների համար կազմվում է էսքիզային նախագիծ և համաձայնեցվում Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի N 91 որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետում նշված իրավասու մարմնի հետ:

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար Մ. Թոփուզյան

Հավելված
ՀՀ կառավարության 2010 թվականի
մայիսի 6-ի N 711-Ն որոշման

ԿԱՐԳ

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

4. Օբյեկտի փորձաքննության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին չհակասելու դեպքում՝ սույն կարգի 25-րդ կետով սահմանված Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ միջին ռիսկայնության աստիճանի (II կատեգորիայի) դասակարգում ունեցող օբյեկտների նախագծային փաստաթղթերի փորձաքննությունը կարող է փոխարինվել Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին նախագծի համապատասխանության վերաբերյալ նախագիծը թողարկող աշխատանքների պատասխանատու կապալառուի գրավոր երաշխավորագրով (այսուհետ՝ երաշխավորագիր), եթե նման պայման նախատեսված է նախագծային կապալի պայմանագրում:

9. Ելնելով քաղաքաշինական փաստաթղթերի նշանակությունից, ինչպես նաև դրանցով իրականացվող քաղաքաշինական օբյեկտների բարդությունից՝ իրականացվում են փորձաքննության հետևյալ տեսակները՝

1) հատուկ համալիր փորձաքննություն (Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ բարձրագույն ռիսկայնության աստիճանի (V կատեգորիայի) դասակարգում ունեցող օբյեկտների մասով).

2) համալիր փորձաքննություն (Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ բարձր ռիսկայնության աստիճանի (IV կատեգորիայի) դասակարգում ունեցող օբյեկտների մասով).

3) պարզ փորձաքննություն (Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ միջինից բարձր ռիսկայնության աստիճանի (III կատեգորիայի) դասակարգում ունեցող օբյեկտների մասով):

10. Հատուկ համալիր փորձաքննության ենթակա են հատկապես վտանգավոր և (կամ) տեխնիկապես բարդ օբյեկտների, ինչպես նաև երկու և ավելի պետությունների շահերին առնչվող քաղաքաշինական օբյեկտների նախագծային փաստաթղթերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ: Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանն է ներկայացվում համապատասխան ոլորտի պետական կառավարման լիազորված մարմնի կողմից՝ կախված տվյալ օբյեկտի գործառնական նշանակությունից (էներգետիկա, տրանսպորտ, ջրային համակարգեր և այլն): Յուրաքանչյուր առանձին դեպքում տվյալ օբյեկտի փորձաքննությունն անցկացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ ստեղծված

ժամանակավոր փորձաքննական հանձնաժողովը, եթե այլ բան նախատեսված չէ միջազգային պայմանագրով: Ժամանակավոր փորձաքննական հանձնաժողովի կազմում պարտադիր կարգով ընդգրկվում է (ընդգրկվում են) քաղաքաշինության տվյալ բնագավառում փորձաքննության գործունեության լիցենզիա ունեցող անձը (անձինք), շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության, օրենքով նախագծային փաստաթղթերի փորձաքննություն անցկացնելու կամ դրանց վերաբերյալ եզրակացություն ներկայացնելու լիազորություն ունեցող շահագրգիռ մարմինները: Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ ժամանակավոր փորձաքննական հանձնաժողովի կազմում կարող են ներառվել նաև խնդրին առնչվող այլ մարմիններ և կազմակերպություններ: Հատուկ համալիր փորձաքննությունը կարող է իրականացվել նաև միջազգային փորձագիտական մարմինների (կամ փորձագետների) ներգրավմամբ: Սույն կետում նշված լիազորված մարմինը ժամանակավոր փորձաքննական հանձնաժողովի ամփոփ եզրակացությունը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության կառավարության քննարկմանը:

10.1. Սույն կարգի 10-րդ կետով սահմանված օբյեկտները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ դասակարգվում են որպես բարձրագույն ռիսկայնության աստիճանի (V կատեգորիայի) օբյեկտներ:

11. Համալիր փորձաքննության ենթակա են քաղաքաշինական այն նախագծային փաստաթղթերը, որոնցով, բացի զուտ քաղաքաշինական մոտեցումներից, պահանջվում է նաև շրջակա միջավայրի ու պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության, արտակարգ իրավիճակների կանխարգելման, կապի համակարգերի, տրանսպորտային, էներգետիկ ու ինժեներական այլ ենթակառուցվածքների, արդյունաբերական անվտանգության, ինչպես նաև ընդերքի արդյունավետ օգտագործման, տեխնոլոգիական, սանիտարահիգիենիկ միջոցառումների իրականացումը: Համալիր փորձաքննությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքում իրականացվում է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ համապատասխան փորձագիտական եզրակացություն տալու իրավասությամբ օժտված շահագրգիռ մարմինների (այսուհետ՝ շահագրգիռ փորձագիտական մարմիններ) մասնակցությամբ:

12. Համալիր փորձաքննության պարտադիր կարգով ենթակա են՝

1) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի (այդ թվում՝ վարկային) միջոցների հաշվին կամ դրանց ներգրավմամբ, պետական նպատակային ծրագրերի շրջանակներում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով իրականացվող օբյեկտների նախագծային փաստաթղթերը.

2) քաղաքաշինական ծրագրային (տարածական պլանավորման) փաստաթղթերը.

3) սահմանված կարգով հաստատված պետական ցանկերում ընդգրկված պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների նախագծային փաստաթղթերը (բացառությամբ սույն կարգի 25-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված դեպքերի).

4) փորձարարական և բազմակի (կրկնակի) օգտագործման օբյեկտների նախագծային փաստաթղթերը.

5) կառուցապատման նախագծերը և Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի դեկտեմբերի 21-ի ,Բնակելի, հասարակական, արտադրական շենքերի ու շինությունների նախագծերի մշակման, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը սահմանելու մասին» N 812 որոշման 2-րդ կետով հաստատված ցանկում ներառված հատուկ օբյեկտների և կարևորագույն նշանակություն ունեցող օբյեկտների (NN 2 և 3 հավելվածներ) նախագծային փաստաթղթերը.

6) ջրային համակարգերի և ինժեներական ենթակառուցվածքների նախագծային փաստաթղթերը.

7) ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների և երկաթուղիների, ինչպես նաև դրանց մաս հանդիսացող արհեստական կառույցների (թունելներ, կամուրջներ և այլն) նախագծային փաստաթղթերը.

8) կապի համակարգի նախագծային փաստաթղթերը:

12.1. Սույն կարգի 12-րդ կետով սահմանված օբյեկտները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ դասակարգվում են որպես բարձր ռիսկայնության աստիճանի (IV կատեգորիայի) օբյեկտներ:

24. Պարզ փորձաքննության ենթակա են սույն կարգի 10-րդ և 11-րդ կետերում չնշված նախագծային փաստաթղթերը: Նախագծի պարզ փորձաքննությունը (կամ երաշխավորագիրը) պարտադիր է քաղաքաշինական օբյեկտի ճարտարապետաշինարարական և արտաքին ու ներքին ինժեներական համակարգերի հուսալիության, կայունության, անվտանգության, ինչպես նաև մարդկանց առողջության ապահովմանն ուղղված օրենսդրական և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին՝ նախագծային փաստաթղթերի համապատասխանությունը հավաստելու առումով: Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննություն չպահանջող ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների ու երկաթուղագծերի, ինչպես նաև դրանց մաս հանդիսացող արհեստական կառույցների (թունելներ, կամուրջներ և այլն) վերակառուցման և (կամ) հիմնանորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերը, եթե դրանք չեն հանգեցնում նշված օբյեկտների սեյսմակայունությունն ու հուսալիությունն ապահովող կոնստրուկցիաների փոփոխության կամ չեն վատթարացնում կոնստրուկտիվ և անվտանգության այլ բնութագրերը

(ցուցանիշները), ներկայացվում են պարզ փորձաքննության:

24.1. Սույն կարգի 24-րդ կետով սահմանված օբյեկտները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ դասակարգվում են որպես միջինից բարձր ռիսկայնության աստիճանի (III կատեգորիայի) օբյեկտներ:

25. Սույն կարգի 4-րդ կետով սահմանված երաշխավորագիրը կարող է կիրառվել սույն կարգի պահանջներին համապատասխան պարզ փորձաքննության ենթակա հետևյալ օբյեկտների նախագծային փաստաթղթերի համար՝

1) ոչ ձեռնարկատիրական (բացառությամբ պետական, համայնքային կամ բարեգործական ծրագրերի շրջանակներում իրականացվող) նպատակով կառուցվող 300 քառ. մետր ընդհանուր մակերեսը չգերազանցող՝ մինչև երկու վերգետնյա և մեկ ստորգետնյա հարկ ունեցող անհատական բնակելի տները (առանձնատները, մենատները) և դրանց օժանդակ նշանակության կառույցները՝

2) սույն կետի 1-ին ենթակետով սահմանված մակերեսն ու հարկայնությունը չգերազանցող՝

ա. բլոկավորված կառուցապատման բնակելի տները, որոնց յուրաքանչյուր բլոկն առանձնացված ելք ունի դեպի դուրս, իսկ բլոկների միջև ընդհանուր պատը բացվածքներ չունի հարևան բլոկի (բլոկների) հետ,

բ. առևտրի, հանրային սննդի և կենցաղային սպասարկման շենքերն ու շինությունները՝ բացառությամբ վառելիքի լիցքավորման կայանների,

գ. հյուրանոցները, հյուրանոցատիպ հանգրվանները, մոթելները, զբոսաշրջային և ճամբարային բնակատեղիները, քեմփինգները,

դ. տարբեր տիպի գրասենյակները, կապի բաժանմունքները, արվեստանոցները,

ե. բաղնիքները, սաունաները,

զ. սույն ենթակետով սահմանված գործառական օգտագործման սենքեր ներառող բազմաֆունկցիոնալ շենքերը.

3) 1500 քառ. մետր ընդհանուր մակերեսը չգերազանցող՝ մինչև երկու վերգետնյա և մեկ ստորգետնյա հարկ (հարկերի բարձրությունը՝ ոչ ավելի, քան 3.0 մետր) ունեցող, սանիտարապահպանական գոտու կազմակերպում չպահանջող՝

ա. գյուղատնտեսական արտադրական նշանակության օբյեկտներից՝ ջերմոցները, դեզանոցները, չորանոցները,

բ. պահեստային շենքերը (բացառությամբ սննդամթերքի, քիմիական, պայթուցիկ, ճառագայթակտիվ նյութերի, դեղորայքի, ինչպես նաև ,Պահեստային շենքերն ՀՀՇՆ IV-11.03.02-04 կիրառման ոլորտը չներառող այլ պահեստների).

4) շինարարության թույլտվություն պահանջող օբյեկտների վերակառուցման, կապիտալ նորոգման աշխատանքները, եթե դրանք չեն հանգեցնում շենքերի, շինությունների

սեյսմակայունությունն ու հուսալիությունն ապահովող կոնստրուկցիաների փոփոխությանը, չեն վատթարացնում շինարարության օբյեկտների կոնստրուկտիվ և անվտանգության այլ բնութագրերը (ցուցանիշները).

5) մոնումենտալ արվեստի անշարժ հուշարձանները, ինչպես նաև ամրակայման (կոնսերվացիա) ենթակա հնագիտական այն հուշարձանները, որոնք Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության եզրակացությամբ ենթակա չեն ամբողջական վերականգնման:

Երաշխավորագիրը կարող է կիրառվել նաև մինչև 5 մետր բարձրություն ունեցող ոչ հիմնական օբյեկտների, ինչպես նաև թենիսի կորտերի, բասկետբոլի և վոլեյբոլի հրապարակների, այլ սպորտային նշանակության բացօթյա հարթային կառույցների (առանց տրիբունաների) նախագծային փաստաթղթերի համար՝ անկախ դրանց չափերից:

Սույն կետի դրույթները չեն տարածվում՝

ա. ամբողջությամբ ստորգետնյա կառույց հանդիսացող ինժեներական, հիդրոտեխնիկական, պաշտպանական նշանակություն ունեցող ենթակառուցվածքի օբյեկտների կամ դրանց մասերի նախագծային փաստաթղթերի վրա,

բ. ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների ու երկաթուղագծերի, ինչպես նաև դրանց մաս հանդիսացող արհեստական կառույցների (թունելներ, կամուրջներ և այլն) վերակառուցման և (կամ) հիմնանորոգման նախագծային փաստաթղթերի վրա:

25.1. Սույն կարգի 25-րդ կետով սահմանված օբյեկտները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ դասակարգվում են որպես միջին ռիսկայնության աստիճանի (II կատեգորիայի) օբյեկտներ:

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար **Դ. Սարգսյան**